ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Տեղ, 0284-96-2-20, hamaynqtegh@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025ԹՎԱԿԱՆԻ N 185-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015թ. մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 2025 թվականի հոկտեմբերի 08-ի դիմումը, ***որոշում եմ՝***

1.ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ բնակավայրի 2-րդ կրթահամալիրի ջրաֆիկացման աշխատանքներ իրականացնելու համար տալ շինարարության թույլտվություն:

1.1.Շինարարական աշխատանքներն իրականացնել 1 տարվա ընթացքում:

1.2.Կառուցապատողը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Տեղ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:

2.Աշխատակազմի քարտուղարի պարտականություններ կատարողին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՂՈՒԼՈՒՆՑ**

2025թ. հոկտեմբերի 15
գ.Տեղ